



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

<Հայաստանի Ավտոմոբիլային
Ճանապարհների Տնօրինություն> ՊՈԱԿ
գլխավոր տնօրեն՝ Հ.Քոչինյանին
հասցե՝ ք.Երևան-10, Նալբանդյան 28
պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետ
պարոն Ա.Հարությունյանին

Կից ուղարկվում է Ձեր 10.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի
գանգատարկման հանձնաժողովի 17.02.2012թ. թիվ 6/4 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 6/4

17 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նիստերում քննության է առնվել <Հայաստանի Ավտոմոբիլային Ճանապարհների Տնօրինություն> ՊՈԱԿ 10.01.2012թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 28.12.2011թ-ի թիվ 1001304 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերագրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.02.2012թ. թիվ 4 որոշման, ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 28.12.2011թ-ի թիվ 1001304 ստուգման ակտի դեմ բերված գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 20.09.2011թ. թիվ 1001304 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Հայաստանի Ավտոմոբիլային Ճանապարհների Տնօրինություն> ՊՈԱԿ-ում (այսուհետ նաև ՊՈԱԿ) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 28.12.2011թ-ին կազմվել է թիվ 1001304 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 75361310 դրամ:

Քննարկման ընթացքում ՊՈԱԿ ներկայացուցիչը նշեցին, որ գանգատը, ըստ էության, վերաբերում է ստուգման ակտով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

ներկայացված փաստաթղթերի ստուգմամբ պարզվեց, որ ՀՀ և ԱԶԲ միջև կնքված <Գյուղական ճանապարհների ծրագիր> վարկային պայմանագրով ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը և <Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն> (գործակալի) միջև կնքված գործակալական համաձայնագրի արձանագրվել են, որ գործակալի կողմից մատուցված ծառայությունները ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարք է և համաձայն այդ համաձայնագրի 3.3.3 կետի, գործակալական ծառայության վճարի գծով առաջացած ԱԱՀ-ն վճարում է համաֆինանսավորման միջոցներից՝ (վարկային ծրագրի շրջանակներում համաֆինանսավորման կարգով պետական բյուջեից վճարվող միջոցների հաշվին): Ստուգվող ժամանակաշրջանում ՊՈԱԿ-ի կողմից խախտվել է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և 8-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները և ԱԶԲ գործառնական եկամուտներից ԱԱՀ չի հաշվարկվել: Արդյունքում նշված խախտումների հետևանքով բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն պակաս է ցույց տրվել 2009թ-ին 8827500 դրամ, 2010թ-ին՝ 19957000 դրամ, 2011թ-ին՝ 6986400 դրամ:

Հիմք ընդունելով <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 67134120 դրամ:

<Հայաստանի Ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն> ՊՈԱԿ կողմից ստուգման ակտի նախագծի վերաբերյալ ստուգող խմբին հասցեագրված առարկություններում մասնավորապես նշված է.

Ստուգման ակտի 5-րդ կետի վերաբերյալ <Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի> իրականացմանն աջակցելու նպատակով Ասիական զարգացման բանկը 2351-ARM և 2467-ARM վարկային համաձայնագրերով ՀՀ կառավարությանը տրամադրել է 31.276 մլն Հատուկ Փոխառական Իրավունքին /ՀՓԻ/ համարժեք գումար կամ շուրջ 47.92 մլն ԱՄՆ դոլար:

Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի նախատեսված ընդհանուր արժեքն է 64.84 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ 47.92 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ և 16.92 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության համաֆինանսավորում, որը ներառում է նաև ծրագրի իրականացման ընթացքում վճարվելիք հարկերը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2007 թվականի նոյեմբերի 15-ին կնքված վարկային պայմանագրի Հոդված 1-ի <Վարկային կանոնակարգ, Սահմանումներ> 1.02 Բաժնի /կ/ ենթակետի, <Հայավտոճան տնօրինություն> ՊՈԱԿ-ը հանդիսանում է Ծրագրի Իրականացման Գործակալություն, ինչպես շարադրված է Վարկային պայմանագրին կից Հավելված 5-ում:

ՀՀ և ԱԶԲ միջև կնքված <Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր> վարկային պայմանագրով ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (Պրինցիպալ)-ի և <Հայաստանի Ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն> ՊՈԱԿ (Գործակալ)-ի միջև կնքված գործակալական համաձայնագիրը ծառայությունների մատուցում չի համարվում Պրինցիպալին և ՊՈԱԿ-ը հանդիսանում է վարկային պայմանագրի կատարման Ծրագրի իրականացման Կազմակերպություն, որը համաձայնագրի շրջանակներում (կետ 2.1) իրականացնում է գործառույթներ Պրինցիպալի անունից: Որպես խախտում արձանագրվածը, <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, ԱԱՀ-ով հարկվող գործարքներ չեն համարվում, ուստի <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ՊՈԱԿ-ի կողմից հարկային հաշիվներ դուրս չեն գրվում:

Գործակալական համաձայնագրի 3.3.1 կետի գործակալի գործառնական ծախսերը գործակալին են տրամադրվում տվյալ տարվա համար Ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատված Ծրագրի տարեկան բյուջեի և գործառնական ծախսերի նախահաշվի համաձայն, որտեղ ավելացված արժեքի հարկի վճարման համար գումար չի նախատեսված, նկատի ունենալով, որ Գործակալական համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված թիվ 2-ում Պրինցիպալի և Գործակալի կողմից հաստատվել է ըստ վճարման աղբյուրների հաշվարկը, որի 2.3 կետով ծրագրի շրջանակներում վճարվող հարկերը տողում ներառվել են վարկային պայմանագրի ի լրումն Հավելված 3-ի 1-ին և 2-րդ կատեգորիաներում ((1) Շինարարական աշխատանքներ և (2) Խորհրդատվական ծառայություններ) նշված թվերի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած հարկային պարտավորությունների չափը (շինարարական աշխատանքների ԱԱՀ, խորհրդատվական ծառայությունների շահութահարկ և ԱԱՀ), հիմք՝ 2007թ-ի նոյեմբերի 30-ի 9/3-1723/1-1283 ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ, գլխավոր գանձապետ Ա.Ջանջուղազյանի տրված տեղեկանքի 3-րդ կետում նշված պարզաբանումը:

Գործակալական համաձայնագրի 2.2 կետով ծրագիրն իրականացնող կազմակերպության ծախսերում (ապարատի պահպանման ծախսեր) ԱԱՀ չի հաշվարկվել: Նշված ծախսերն առևտրային գործարք չեն, այլ Պրինցիպալի հանձնարարությունն է Գործակալին ԾԻԿ-ի գործառույթ կատարելու համար և ԱԱՀ-ի պարտավորություն չի առաջանում: Հակառակ դեպքում, հարկերի հաշվարկների հիմնավորում աղյուսակի 2.3 կետի <Ծրագրի շրջանակներում վճարվող հարկեր> տողում՝ 2061514.4 հազ.դրամ գումարին կավելանար նաև Ծրագիրն իրականացնող կազմակերպության ծախսերի վճարի դիմաց ԱԱՀ-ի չափը:

ՀՀ և ԱԶԲ միջև կնքված <Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր> վարկային պայմանագրով ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (Պրինցիպալ)-ի և <Հայաստանի Ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն> ՊՈԱԿ (Գործակալ)-ի միջև կնքված գործակալական համաձայնագրի 3.3.3 կետի գործակալական ծառայության վճարի գծով առաջացած՝ 2061514.4 հազ.դրամ շահութահարկի և ԱԱՀ-ի գումարը վճարվում է համաֆինանսավորման միջոցներից:

<Հայավտոճան տնօրինություն> ՊՈԱԿ-ի <ԱԱՀ-ի հաշվարկ>-ում նշված ծախսերը (ծրագիրն իրականացնող կազմակերպության ծախսեր) ընդգրկվել են ԱԱՀ-ից ազատված (հարկման օբյեկտ չհամարվող) գործարքներում և հետևաբար <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ կետով չեն հաշվանցվել:

Ստուգման ակտի 5-րդ կետում արձանագրված տվյալները այն մասին, որ ՊՈԱԿ-ը 2009թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով և 2010թ. մայիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկով ավել հաշվանցում է կատարել՝ գումարներով 316000 դրամ և 632900 դրամ, որով խախտել է <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, անհիմն են: Պարզաբանում եմ՝ նշված գումարների ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվել են համաձայն <ԱԱՀ-ի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ՊՈԱԿ-ի ներկայացուցիչների և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության (Պրինցիպալ) ի դեմս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, մի կողմից և <Հայաստանի Ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն> ՊՈԱԿ (Գործակալ) միջև 2008թ-ի հուլիսի 11-ին կնքվել է ՀՀ և ԱԶԲ-ի միջև կնքված <Գյուղական ճանապարհահատվածի ծրագիր (հատուկ գործառնություններ)> վարկային պայմանագրի մասին գործակալության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի 3.3 կետի համաձայն, Գործակալական ծառայության համար Պրինցիպալը Գործակալին վճարում է գործակալական վճար:

Համաձայնագրի 3.3.1 կետի համաձայն, Գործակալի գործառնական ծախսերը գործակալին են տրամադրվում տվյալ տարվա համար Ծրագրի կառավարման խորհրդի կողմից հաստատված Ծրագրի տարեկան բյուջեի և գործառնական ծախսերի նախահաշվի համաձայն:

Համաձայնագրի 3.3.2 կետի համաձայն, տվյալ տարվա ծախսերի արդյունքով տնտեսված գործառնական ծախսերի գումարները հանդիսանում են Գործակալի սեփականությունը և Պրինցիպալին ետ չեն վերադարձվում:

Համաձայնագրի 3.3.3 կետի համաձայն, Գործակալական ծառայության վճարի գծով առաջագած ԱԱՀ-ն վճարվում է համաֆինանսավորման միջոցներից:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. <ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում ծառայությունների մատուցումը՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն), որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը)>:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն. <Հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում հարկվող շրջանառություն է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր)>՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ>:

Քննարկվող դեպքում <Հայաստանի Ավտոմոբիլային Ճանապարհների Տնօրինություն> ՊՈԱԿ-ի կողմից կատարված հատուցման դիմաց մատուցվել են գործակալության ծառայություններ, սակայն խախտելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և 8-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, ԱԶԲ գործառնական եկամուտներից ԱԱՀ չի հաշվարկվել:

Հարկ է նշել նաև, որ եթե <Ճահուֆահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպությունները՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով շահուֆահարկ վճարող չեն հանդիսանում, ապա <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքով պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար նման արտոնություն նախատեսված չէ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Հայաստանի Ավտոմոբիլային Ճանապարհների Տնօրինություն> ՊՈԱԿ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 28.12.2011թ-ի թիվ 1001304 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ